

4.1.2 Մարդասիրական օգնություն

Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, 2000թ. հունվար-օգոստոսին մարդասիրական օգնության կարգով, Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել 23657.7 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 24467.7 մլն. դրամ կամ 45.8 մլն. ԱՄՆ դոլար: Ստացված օգնության 41.6%-ը կազմել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը, 12.0%-ը՝ մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմները, 9.4%-ը՝ սարքերը և ապարատները, 6.5%-ը՝ բուսական ծագման արտադրանքը, 6.3%-ը՝ կենդանի կենդանիները և կենդանական ծագման արտադրանքը և այլ բեռներ:

Մարդասիրական օգնության ծավալը 1999-2000թթ. հունվար-օգոստոսին, ըստ ապրանքային խմբերի

	1999 թ. հունվար -օգոստոս			2000 թ. հունվար-օգոստոս			Աճի տեմպը %-ով
	Քանակը, տոննա	Արժեքը		Քանակը, տոննա	Արժեքը		
		մլն. դրամ	հազ. ԱՄՆ\$		մլն. դրամ	հազ. ԱՄՆ \$	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	11898.3	21773.0	40367.1	23657.7	24467.7	45793.9	113.4
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	17.9	11.1	20.5	835.6	1533.8	2903.0	14163.7
Բուսական ծագման արտադրանք	5616.3	1301.5	2418.2	8257.8	1570.0	2961.5	122.5
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	1954.5	1110.8	2049.8	1504.6	696.2	1318.3	64.3
Պատրաստի սննդի արտադրանք	280.7	97.5	182.8	1360.1	648.1	1208.1	660.9
Հանքահումքային արտադրանք	789.4	61.2	113.1	20.4	4.4	8.2	7.3
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1246.6	9158.3	16961.1	10149.9	10238.3	19059.5	112.4
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	58.3	112.8	210.4	23.4	50.1	94.1	44.7
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	2.8	21.5	39.5	0.7	3.6	6.7	16.8
Փայտ և փայտյա իրեր	3.0	13.9	25.7	5.6	27.4	51.0	198.0
Թուղթ և թղթից իրեր	131.5	429.5	801.0	73.3	1039.1	1899.9	237.2
Մանածագործական իրեր	554.9	2806.0	5181.3	357.7	1821.0	3394.7	65.5
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	13.0	83.0	153.3	10.3	64.1	120.6	78.7
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	190.7	140.4	262.5	72.7	15.5	29.2	11.1
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	~
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	116.1	215.8	400.3	20.0	24.5	45.6	11.4
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	342.6	2715.9	5026.0	397.8	2920.2	5512.9	109.7
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	196.5	648.3	1200.6	304.7	623.5	1177.2	98.0
Սարքեր և ապարատներ	89.2	1981.7	3712.3	98.8	2274.7	4289.3	115.5
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	294.1	853.4	1589.4	164.4	894.4	1679.6	105.7
Արվեստի ստեղծագործություններ	0.2	10.4	19.2	0.0	18.6	34.7	180.5

Մարդասիրական օգնություն ստացվել է աշխարհի 25 երկրներից, հիմնականում ԱՄՆ-ից (ընդհանուր օգնության 74.0%-ը), Իտալիայից (9.0%-ը), Ճապոնիայից (5.90%-ը), Հունաստանից (3.1%-ը), Ֆրանսիայից (2.9%-ը):